

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 21/10

ք.Երևան

10 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՈՉ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

ՀՀ ԿԱ ՊԵԿ Օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից 28.04.2017թ. «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՈՉ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) նկատմամբ կազմվել է վարչական ակտ 5.000.000 դրամի չափով, որն ընկերությունը դատական կարգով բողոքարկել է և այն ներկայումս գտնվում է դատաքննության փուլում: 2018թ. հունվարի 1-ից հետո հարկային պարտավորությունների միասնական հաշվին վճարված ընկերության ընթացիկ պարտավորությունների գումարներն ամբողջությամբ ուղղվել են վերոնշյալ ակտով առաջացած պարտքի մարմանը, իսկ ընթացիկ պարտավորությունների վրա շարունակում են հաշվարկվել ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված տույժեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ակտի բողոքարկման հայցադիմումը դատական վարույթ ընդունելու պահից կասեցվում է բողոքարկվող ակտի կատարումը, ընկերությունը խնդրում է իրականացնել համապատասխան կարգավորում և միասնական հաշվեհամարին կատարված վճարումներն ուղղել ընթացիկ հարկային պարտավորությունների մարմանը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Օպերատիվ հետախուզության վարչության կողմից «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՈՉ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի նկատմամբ 28.04.2017թ. կազմվել է N1432420 վարչական ակտը (այսուհետ նաև՝ վարչական ակտ), որով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 5.000.000 դրամ: Ընկերությունը, համաձայն չլինելով վարչական ակտի հետ հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 13.11.2017թ. որոշմամբ թիվ ՎԴ/5960/05/17 վարչական գործն ընդունվել է վարույթ, իսկ դատաքննության նիստը նշանակվել է 06.02.2018թ.: Այսինքն, վարչական ակտը ներկայումս գտնվում է դատաքննության փուլում:

Տվյալ դեպքում 2018թ. հունվարի 1-ից հետո հարկային պարտավորությունների միասնական հաշվին ընկերության կողմից վճարվել է 512.370 դրամ, որից 304.393 դրամն ուղղվել է վարչական ակտի մարմանը, իսկ մնացած 207.977 դրամը՝ 2017թ. 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի գծով պարտավորության մարմանը: Բացի այդ, ընկերությունը 31.12.2017թ. դրությամբ ունեցել է ակցիզային հարկի գծով գերավճար՝ 195.607 դրամ, որը նույնպես ուղղվել է վարչական ակտի մարմանը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ ընկերության կողմից վարչական ակտը դատական կարգով վիճարկվելու պայմաններում հարկային մարմնին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ ակտի կատարմանը ուղղված գործողություններից, մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննարկվող դեպքում թիվ ՎԴ/5960/05/17 վարչական գործը գտնվում է վարչական դատարանի վարույթում: Այսինքն, թիվ ՎԴ/5960/05/17 վարչական գործով դեռ առկա չէ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն հարցի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված նախադեպային որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության կողմից վճարված այն գումարները, որոնք հարկային մարմնի կողմից ուղղվել են վերը նշված ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՈՉ ԱԿՈՇՈՂԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի կողմից բերված դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ